ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

Տ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, *Հայկական ազգանուն, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, 322 էջ։*

Հայոց լեզվի պատմության հարցերը գրեթե միշտ գտնվել են հայերենագետների ուշադրության կենտրոնում։ Հրապարակի վրա են հայոց լեզվի այս կամ այն շրջանի կամ նրա ժամանակային մի հատվածի պատմությանը վերաբերող զգալի թվով ուսումնասիրություններ, որոնցում հաճախ քննության է առնվում միևնույն նյութը, սակավ դեպքերում՝ կատարվում փաստերի ծավալուն ընտրանք։ Այդ հարցերը հետազոտության առարկա են դարձվում ոչ միայն լեզվի պատմաբանների, այլև հայերենագիտության այլ բնագավառների մասնագետների կողմից։ Կարևոր է նաև այն հանգամանքը, որ լեզվական իրողությունները ուսումնասիրվում են թե՛ ավանդական, թե՛ ժամանակակից լեզվաբանության հիմունքներով, նորագույն մեթոդների կիրառումով։ Դրանով, ինչ խոսք, ավելի է մեծանում լեզվական երևույթի ամբողջական նկարագրության հավանականությունը։

Նման նպատակամղվածությունն, անշուշտ, առավել բնորոշ է մեր օրերի հայերենագիտությանը։ Վերջինիս հետաքրքրության շրջանակն ավելի լայն է, քննվող նյութի ընդգրկումն ավելի ծավալուն ու կոնկրետ, քան, ասենք, երեք-չորս տասնամյակ առաջ։ Առաջներում հայերենագետներին ավելի շատ հետաքրքրում էին խնդրո առարկա հարցերի մասին տեսական քննարկումներն ու բանավիճային հակադրումները։ Այնինչ մեր օրերում առաջին պլան է մղվում հայերենի իրողությունների ըստ ամենայնի և խորամուխ վերհանումը, փաստացի և մանրամասն վերլուծությունը, այնուհետև առարկայական և անկողմնակալ գնահատությունը։

Համառոտակի, նշված պահանջների և նկատառումների տեսակետից էլ, ահա, կարելի է շեշտել այն հանգամանքը, որ հայերենագիտությունը հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում հասել է որոշակի ձեռքբերումների։ Նման մի ուսումնասիրություն Տ. Մ. Ավետիսյանի հիշյալ աշխատությունը։ Այն հեղինակի երկար տարիների ջանքերի արգասիքն է, նրա որոնանքի ու քննարկումների արդյունքը։ Որքանո՞վ է անհրաժեշտ այդ ուսումնասիրության երևան գալը և ինչո՞վ է այն ուշագրավ, արժեքավոր։

Աշխատությունը գրված է նյութի համբերատար հավաքմամբ, դասակարգման և քննության պատմական ու համաժամանակյա մոտեցումներով։ Վերջին մոտեցման դեպքում առավելապես գործադրված են վիճակագրական, քանակային վերլուծության եղանակները։ Այն պարունակում է երեք մաս՝ բուն ուսումնասիրությունը (էջ 3—258), ազգանունների ցանկը (էջ 259—316) և հավելվածաբար բերվող աղյուսակները։ Բուն ուսումնասիրությունը բաժանված է վեց գլխի, որտեղ առանձին-առանձին քննվում են հայերի անվանման բանաձևերը (էջ 8—39), հայկական ազգանունների ձևավորման հարցը (էջ 40—82), անձնանուն և ոչ անձնանուն ազգանվանակերտ հիմքերը (էջ 83—186, 187—222), ազգանվանակերտ ածանցները (էջ 223—228) և տարբերակային ազգանունները (էջ 229—258). այստեղ ամենածավալունը 3-րդ գլուխն է (103 էջ), ամենասահմանափակը՝ 5-րդը (6 էջ)։ Ազգանունների ցանկը մեր մոտավոր հաշվումներով պարունակում է շուրջ 7200 ազգանուն, որոնք ամենայն հավանականությամբ բերված են պատահական ընտրանքով։

Ուսումնասիրության առաջին գլխում հայերի անվանման բանաձևերը քննվում են պատմական-կառուցվածքային մոտեցումով։ Նյութի պատմական քննությունը կատարվում է ըստ հայոց լեզվի պատմության այն փուլերի, որոնք առանձնացված են Գ. Ջահուկյանի կողմից։ Այստեղ առկա է որոշակի բացթողում։ Այսպես, հնագույն շրջանը դիտվում է մինչև V դարը, հինը՝ V դարի վերջերից մինչև XI դարը. իսկ միջին շրջանը՝ XII—XIV դդ. (էջ 18)։ Դժվար չէ նկատել, որ շրջանաբաժանման մեջ բացառված են V դարի սկզբներից մինչև «վերջերը» և ողջ XI դարը։ Դա, իհարկե, կոնկրետ նյութի քննության ժամանակ հաղթահարված է (էջ 13—31)։ Այնուհետև խոսվում է հայերենի տարբեր փուլերում հանդես եկած բնորոշ բանաձևերի մասին, բերվում հավաստի օրինակներ,

կազմվում են աղյուսակներ հնագույն և հին շրջաններում գործածված անձնանվանական բանաձևերի համար։ Մյուս շրջանների համար հեղինակը բավարարվում է օրինակների մատնանշումով։ Ի դեպ՝ հայոց լեզվի պատմության տարբեր փուլերում վկայված օրինակների մատնանշումը սպասելի էր կոնկրետ բնագրային վկայություններով։ Այդ դեպքում նյութի ուսումնասիրության պատմական կողմը, մեր կարծիքով, ավելի ցայտուն և վստահելի պիտի համարվեր։ Հեղինակը բավարարվել է այս կամ այն ժամանակաշրջանին վերաբերող անձնանվանական նյութի մասին հրապարակված աշխատությունների ընձեռած տվյալներով, որն ըստ էության բավարար է, սակայն՝ ոչ վերջնական և սպառիչ։ Այդուհանդերձ, դրվատելի է այն, որ աշխատության հիշյալ գլուխը բավական հիմնավոր պատկերացում է տալիս հայերեն անձնանունների այն բանաձևումների մասին, որոնք մեզանում գործառել են տարբեր ժամտնակներում։ Ավելին, ձեռքբերումը կարող է հիմք հանդիսանալ հետագայում այդ ուղղությամբ ավելի հանգամանալից հետազոտություններ ձեռնարկելու համար։

Տ. Ավետիսյանի աշխատության ուշագրավ մասերից է 2-րդ գլուխը, որտեղ բավական մանրամասն քննվում են հայկական ազգանունների պատմական ձևավորման հարցերը, փուլ առ փուլ ներկայացվում են հատկանշական սոցիալական, լեզվական այն առանձնահատկությունները, որոնց հիման վրա բաղադրվել են հայերեն ազգանունները։ Նյութի քննությունը ավելի ցայտուն է դառնում համապատասխան աղյուսակների շնորհիվ։ Այստեղ նկատելի է դառնում հեղինակի ջանքերի գործադրումը. փաստերի որոշակի դասակարգումը և դրանց վստահ օգտագործումը։

Ուսումնասիրության մյուս գլուխները գերազանցապես կառուցվածքային, այսինքն՝ համաժամանակյա մոտեցումով կատարված քննություն են։ Այստեղ ուշադրության առարկա են հայոց լեզվում կուտակված փաստերի լեզվական քննության հարցերը։ Կատարվում են ազգանունների բառակազմական-ձևակազմական, իմաստաբանական վերլուծություններ։ Վերջիններս հիմնված են համապատասխան դասակարգումների և խմբավորումների վրա։ Այսպես, անձնանուն հանդիսացող ազգանվանակերտ հիմքերն առանձնացվում և դասակարգվում են ըստ ծագումնային, ժամանակային, կառուցվածքային և տարբերակային հատկանիշների։ Վերջիններս, իրոք, իրական միջոցներ են այդ կարգի հիմքերի մանրամասն վերլուծության համար։

Ծագումնային դասակարգման դեպքում խոսվում է հիմքակազմ տարրերի այնպիսի շերտերի մասին, որոնք այլ բան չեն, քան բնիկ բառեր. այլև՝ իրանական, հունական, արաբական և այլ կարգի փոխառություններ։ Այստեղ, նյութի սպառման ձգտումով պայմանավորված, հեղինակը հաճախ փորձում է նաև այդ շերտերը վերախմբավորել ըստ անձնանվանակրի սոցիալական, իրավական վիճակի և այլ կարգի գործառության պայմանների, ըստ որում վերջում տալիս է այդ շերտերի վիճակագրական համեմատությունն և դուրս բերում ընդհանուր հայտարարը։ Նման դեպքերում է, որ խրախուսելի է դառնում վերլուծության ավանդական և ժամանակակից մեթոդների համակցումը։ Դա ցայտուն կերպով նկատվում է աշխատության սույն բաժնում։

Ըստ ժամանակային հատկանիշի դասակարգման սկզբում, չգիտես ինչու, դարձյալ հիշեցվում է, որ հեղինակը առաջնորդվում է Գ. Ջահուկյանի շրջանաբաժանմամբ (ի դեպ՝ այստեղ նշվող փուլերը չեն բռնում էջ 13-ում տրվածին)։ Այդ դասակարգումը, սակայն, խիստ անհրաժեշտ է։ Ժամանակային դասակարգումը ծագումնայինի հետ միասին կազմում են Տ. Ավետիսյանի սույն աշխատության ուշագրավ մասը։ Այդ բաժնում նյութը առանձնացվում և մանրամասնաբար վերլուծվում է ըստ լեզվի պատմության շրջանների, ըստ որոշակի լեզվաէթնիկական ազդեցությամբ բնութագրվող կաղապարների՝ կապված պատմական ժամանակներում հայերի հետ շփված ժողովուրդների և ցեղերի ունեցած լեզվական փոխազդեցությունների հետ։ Հայկական ազգանվանական հիմքերի ժամանակային դասակարգմամբ ուսումնասիրումն ավելի է ընդլայնում մեր պատկերացումը հայոց լեզվի պատմության վերաբերյալ։

Ազգանվանական հիմքերի կառուցվածքային և տարբերակային դասակարգումներն ըստ էության ներկայացնում են համաժամանակյա քննություն։ Առաջին դեպքում այդ հիմքերից վերցվում են բաղադրյալները, որոնք բաժանվում են երկու խմբի՝ գծիկով և ձուլյալ գրությամբ։ Թվարկվում և օրինակով նշվում են այն բաղադրիչները (տեր, մելիք և այլն), որոնք սերում են գծիկով բաղադրյալ հիմքեր, այլև՝ միաձույլ բաղադրություններ (ջան, բեկ, խան և այլն)։ Երկու դեպքում էլ սերող հիմքերը հիմնականում եղել են պատվանուններ, որոշ դեպքերում՝ վերաբերմունքային բառեր։ Այստեղ, ցավոք, չեն քննվում բնիկ հայերենյան կազմությամբ բարդ կամ ածանցավոր բաղադրյալ հիմքերը, որոնցով հայերենում ունենք ոչ քիչ թվով ազգանուններ (Հայրապետ, սևաչեր, մանուկ, վարդերես, խաչատուր, ասատուր

և այլն)։ Երկրորդ դեպքում որոշվում են լեզվական այն տարբերակները, որոնցով բաղադրվում են ինքնակա կամ տարբերակային ազգանուններ։ Նկատի են առնվում ածանցական, ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հնչյունական տարբերակներով բաղադրությունները։ Նյութի քննությունն այս բաժնում բավական մանրամասն է։ Բերվում են միանգամայն համոզիչ, նույնիսկ չափից ավելի օրինակներ։ Նյութի այսպիսի առատությունը, ինչ խոսք, պայմանավորված է հայերենի անձնանվանական համակարգի խիստ ընդգծված տարբերակային բնույթով։

Աշխատության մեջ առանձին ուսումնասիրության առարկա է ոչ անձնանուն ազգանվանական հիմքերի հարցը։ Այդպիսի հիմք են կազմում ուղեկցող բառերը (ազգակցություն, աստիճան, տիտղոս, պաշտոն, արհեստ, զբաղմունք, տեղաբնակություն ցույց տվող բառեր)։ Հայկական ազգանունների բաղադրության համար հատկանշական է մականուն հիմքերի գործածումը։ Մականվանական հիմքերը հաճախ տոհմական անուններ են, որոնք խիստ բնորոշ են հայկական միջավայրին։ Եվ միանգամայն իրավացի է հեղինակը, երբ գրում է, որ «տոհմանունների հավաքման և ուսումնասիրության աշխատանքը անհետաձգելի և խիստ կարևոր գործ է, քանի որ նրանք ազգագրական, բարբառագիտական, երկրագիտական և վերջապես ընդհանուր մշակութային մեծ արժեք են ներկայացնում։ Այս դեպքում հապաղելը կարող է ցավալի կորուստների տեղիք տալ, քանի որ անվանման եղանակը՝ այսօր ընդունված բանաձևը իր իրավաբանական ուժով և գործածության հաճախականությամբ աստիճանաբար դուրս է մղում տոհմանունները» (էջ 212)։ Աշխատության այս բաժնում սպասելի էր այսպես կոչված պատահական, «կեղծ» ազգանունների կազմության քննությունը։ Դրանք, ճիշտ է, մեզանում տարածված իրողություն չեն, սակայն խիստ բնորոշ են։ Այդպիսի կազմությամբ են հայ մշակույթի մի շարք գործիչների ազգանունները։ Այսպես, ունենք՝ Զմպայան ~ Դուրյան (Պետրոս Դուրյան), Քրիստոստուրյան ~ (Տուրյան) ~ Դուրյան (Լյուդվիգ Դուրյան), այլև Նաիրի Զարյան, Գեղամ Սարյան, Եղիշե Չարենց, Խաչիկ Դաշտենց, Սողոմոն Տարոնցի և այլն։

Հայերենում ամենաորոշակի ածանցումը միշտ երևան է գալիս ազգանունների բաղադրության դեպքում։ Հայկական ազգանունը գոյանում է սովորաբար -յան, որոշ դեպքերում՝ -յանց, -ունի, -ենց, -ունց, -անց ածանցներով։ Լեզվի պատմության տեսակետից լրիվ արդարանում է ազգանվան ածանցային կազմության տարաժամանակյա քննությունը։ Աշխատության մեջ ավելի շատ նկատելի է փաստերի ժամանակային մեկնաբանությունը, քան դրանց պատմական քննությունը։ Վերջինս, անշուշտ, բոլորովին այլ խնդիր է, արժանի առանձին ուշադրության։

Տարբերակային ազգանունները հայերենում, ճիշտ է, որոշ դեպքերում առաջանում են տարբերակային հիմքերի առկայության պայմաններում, սակայն առանձին երևույթ են հայերենի բառապաշարի համակարգում՝ առանձին վերցված։ Սույն աշխատության մեջ առանձին-առանձին քննության են առնվում այնպիսի ազգանունները, որոնք միմյանց նկատմամբ ակնհայտ տարբերակներ են, որովհետև դրանք սերված են հնչյունական, գրային, այլալեզվյան տարբերակային հիմքերով, կամ էլ ներկայացնում են այդպիսի հիմքեր. օրինակ՝ Երեցյան—Երիցյան, Զարոբյան—Զարուբյան, Թովմասյան—Թոմասյան, Ամոյյան—Ամյոյան, Ափրիկյան—Աֆրիկյան և այլն։ Նման հիմքերի գոյացումը, բնականաբար, արդյունք է արտալեզվական մի շարք հանգամանքների, հայերենի հետ այլ լեզուների ունեցած տևական շփումների։ Ըստ այդմ քննության են առնվում հնչյունային տարբերակներ գոյացնող այնպիսի հնչյունական երևույթներ, ինչպիսին են ձայնավորների և բաղաձայնների զանազան հնչյունափոխությունները, հնչյունների հավելումը, սղումը, հնչյունական դրափոխությունը, հնչյունի պարզեցումը, բաղարկումը։ Օրինակ՝ Ոսկանյան—Ուսկանյան, Սասունցյան—Սասունյան, Արզոյան—Ազրոյան, Քանանյան—Քանյան, Ռեթևոսյան—Մաթևոսյան—Ռաթևոսյան, Օղարաշյան—Օղարաշխյան և այլն։ Գրային տարբերակները այլ բան չեն, քան արտասանական մեկ անփոփոխակի երբավոր պատկերացումը. օրինակ Ափրիկյան—Էփրիկյան և այլն։ Եվ ըստ այդմ էլ քննվում են հայերեն որոշ թվով ազգանուններ։ Հեղինակը իրավացիորեն այլալեզու տարբերակներ է կոչել նրանք, որոնք հայերենի զուգադրությամբ այլ լեզուների հանդես բերած ազդեցության արդյունք են։ Դրանք հայերենին զուգահեռ կիրառություն են, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում գրավել բնիկ, հայկական ձևի տեղը։ Դա պայմանավորված է հայերենի ներքին կենսունակությամբ և անհարմարվողականությամբ։ Այլալեզու տարբերակները հետևանք են ոչ միայն ընդհանուր լեզվական զուգաձևման, այլև մասնավոր՝ անհատական դեպքերի ու դիպվածների։ Այս վերջին դեպքում ավելի շատ զգացվում է հայերենին լավ չտիրապետող անձանց, այլախոսների լեզվական-անհատական միջամտությունը։ Հայերենի ազգանվանական համակարգի կանոնարկման

դեպքում ամենայն լրջությամբ հարկավոր է հաշվի առնել նման միջամտությունը։ Տ. Ավետիսյանը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է այլալեզու տարբերակներ ներկայացնող ազգանունները, տալիս դրանց լեզվաբանական գնահատությունը։

Հեղինակը ինչպես այս, այնպես էլ մյուս հարցերի քննության դեպքում աշխատել է հիմնվել ընդհանուր կողմերի վրա, վեր հանել այն հիմնականը, որը բնորոշ է հայկական ազգանուններին։ Հեղինակը գրում է. «Մենք աշխատել ենք վեր հանել այդ բոլոր կողմերը և ուսումնասիրել դրանք իբրև համակարգ։ Գիտակցում ենք, որ մեր տեսադաշտից դուրս մնացած կլինեն առանձին մանրամասներ։ Մարդանվանագիտությունը, իր լայն ըմբռնմամբ, համեմատաբար նոր բնագավառ է հայ լեզվաբանության համար։ Եթե ի նկատի չունենանք անվանագիտական - ստուգաբանական աշխատանքները, ապա այստեղ անելիքները լայն ասպարեզ են բացում հետագա ուսումնասիրությունների համար» (էջ 257)։

Սույն աշխատության հետ կապված չենք կարող չխոսել մի այնպիսի երևույթի մասին, ինչպիսին են հեղինակի կողմից տրվող այն դիտողությունները, որոնք տեղ են գտել շարադրանքի տողատակում։ Դրանք այսպես կոչված հարակից բացատրություններ ու մեկնաբանություններ են, որոնք հետապնդում են այս կամ այն ազգանվան ծագումը, կազմությունը, բնիմաստը (էտիմոնը), զուգաձևումը և այլն պարզաբանելու նպատակ։ Այստեղ մեր դիտողությունն այն է, որ դրանք հաճախ լրիվ չեն, երբեմն չեն համոզում, առավել ևս որոշ դեպքերում կասկածելի են կամ պարզապես սխալ։ Այդպիսին են, օրինակ, 1-ին գլխի թիվ 10, 15. 2-րդ գլխի թիվ 12. 3-րդ գլխի թիվ 4. 6. 9. 10; 16. 17, 36, 46. 81, 87, 91, 94. 97, 98. 101, 108, 109. 4-րդ գլխի թիվ 8. 9, 11. 12, 13, 16, 17, 6-րդ գլխի թիվ 12, 18. 19 ծանոթագրությունները և այլն։ Հեղինակը նման դեպքերում հարկ է համարում ծանոթագրությունը սկսել «...ի բացառվում», «հնարավոր է», «ենթադրելի է» արտահայտություններով։

Աշխատության մեջ տեղ են գտել նաև տեխնիկական բնույթի անճշտություններ։ Քիչ չեն դեպքերը, երբ միևնույն հեղինակի աշխատությունը տարբեր տեղերում տարբեր կերպ է վերկայակոչվում։ Այս կամ այն գրավոր աղբյուրը երբեմն մատնանշվում է ու միակերպ։ Միևնույն երկի տարբեր մասերը բերվում են իբրև առանձին միավորներ։ Նկատելի է նաև այն, որ երբեմն չի պահպանվում ուղղագրությունը. գրաբար գրավոր աղբյուրները նշվում են գրաբարի կանոնների խախտումով, երբեմն՝ խառն։ Նման վրիպումներն ու անճշտությունները չեն պատշաճում սույն աշխատության շարադրանքին։

«Հայկական ազգանուն» աշխատության գրախոսման ընթացքում և վերջում արված դիտողությունները մասնավոր բնույթ են կրում։ Կարևորն այն է, որ այս աշխատությամբ հայկական ազգանունների ուսումնասիրությունը թևակոխում է իր առաջընթացի նոր փուլը և ավելի մեծ ծավալ ու ընդգրկում ստանալու հնարավորություն է ձեռք բերում։

Տ. Ավետիսյանի «Հայկական ազգանուն» աշխատությունը շատ անհրաժեշտ գործ է հայոց լեզվի բառապաշարի պատմության, հայկական ազգանվան և առհասարակ հայերեն անձնանվան ուսումնասիրության բնագավառում։

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

S. DER NERSESSIAN, A. MEKHITARIAN. Armenian Miniatures from Isfahan, Preface and Introduction by H. H. Catholicos Karekin II, Les Editeurs d'Art Associés, Armenian Catholicosate of Cilicia. Brussels, 1986, p. 219, fig. 124

S. DER NERSESSIAN, A. MEKHITARIAN. Miniatures Arméniennes d'Ispahan. Préface et Introduction de S. S. le Catholicos Karekine II, Les Editeurs d'Art Associés, Catholicossat Arménien de Cilicie. Bruxelles, 1986, p. 219, fig. 124.

Վերջերս Բրյուսելում հայ արվեստի վաստակաշատ ուսումնասիրողներ Ս. Տեր-Ներսեսյանի և Արփագ Մխիթարյանի աշխատասիրությամբ ֆրանսերեն և առանձին նաև անգլերեն լեզուներով լույս է տեսել «Սպահանի հայկական մանրանկարները» գիրքը, որը նվիրված է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի թանգարանի ձեռագրերի նկարազարդումներին։ Այս հատորի